

ՄԵԾԱՆՈՒՆ ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ

ՏԻԿԻՆ ՀՐԱԶԵԱՅԻ ՃԱՌԸ

ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ ՊԱՔՈՒ, 1908 ՀՈԿՏ. 3ԻՆ (1)

Ո՛վ Մուսայ, ներշնչիր ինձ որ կարողանամ
հեղուկութեամբ հրդեհել նոցա սրտերու մէջ զե-
ղարուեստի սէրը: Այո՛, առանց սիրոյ չիք փըր-
կութիւն: Սէրը ամենակարող է, ինչ զաւանան-
քի էլ պատկանի, նա ընդունակ է անկարելին
կարելի դարձնել իր մեծ ուժի զօրութեամբ:

Սիրել, միայն սիրել, եւ այդ բաւական է
ձեր միտքը լուսաւորելու եւ զեղարուեստի սե-
ղանի փշրանացը մասնակից դարձնելու:

Պարոնայք եւ տիկնայք, ով որ իր մէջ չի
զգուս այդ մեծ ոյժը, այսինքն սէրը դէպի զե-
ղարուեստը, մի քանի փորձերից յետոյ նա
պէտք է հրաժարուի:

1) Այս փառին բնագիրը, տիկին Հրաչեայի
ձեռքով գրուած, կը գտնուի հանգուցեալ մեծ
արուեստագիտուհիին Յիշողութիւններու ձե-
ռագիրը պարունակող տետրակին վերջը: Այդ
տետրակը տիկին Հրաչեայ անձամբ ինծի յանձ-
նեց 1909ին գարնան երբ Պաֆու էի, որպէս զի
Յիշողութիւնները հրատարակեմ Անահիտի մէջ:
Յիշողութիւնները ամբողջութեամբ երեսցան
Անահիտի մէջ (1909 - 1910), եւ յետոյ հատորի
ձեռով: Անահիտի ներկայ թիւին մէջ կը հրա-
տարակեմ ռումբիկ վեհ ու ջերմ շունչով մը
ի այդ փառը որ, հակառակ իր ձեռի քերու-
քեանց, շահեկան է եւ որ ցարդ անտիպ կը
մնար: Տետրակը Պ. Շահվերդեանի միջոցով
զրկեցի երեսանի Պետական Թանգարանի վար-
չութեան:

Ա. 2.

Բայց երբ կայ սէր, եթէ ոչ տաղանդ, դէթ
ապագային բեմի պէտքական անդամը կը լինի:

Ոյժիցս բարձր մի պաշտօն եմ յանձն առել
եւ պիտի բացատրեմ: Միշտ մտածութեանս ա-
ռարկան է եղել, ես մի ճրագ եմ որ մարտելու
մօտ է. 11 տարեկան հասակից վառուել է իմ
մէջ զեղարուեստի կրակը, միթէ չի՞ պիտի կա-
րողանամ իմ ազգի զաւակների սրտի մէջ այդ
կրակից կայծեր նետել եւ հրդեհներ առաջա-
ցնել, որպէսզի անհետ չկորչի իմ յիշատակը:

Այսօր տեսնում եմ իմ երազած աշակերտ-
ներին իմ առաջ. ուստի խնդրում եմ, ազաչում
եմ, օգնեցէք ինձ, սիրեցէք ինձ, ինչպէս ես
պէտք է սիրեմ ձեզ. հաւաքենք մեր ոյժերը եւ
իրականացունենք այն մեծ գործը որ շատերի
համար երազ կարող է համարուել:

Շատ բան չո՞ւնեմ ասելու. թատրոնի նշա-
նակութեան մասին չպիտի խօսիմ ձեր հետ,
վստահ լինելով որ ամէն միւնդ գիտակցաբար
էք հաւաքուել այստեղ: Ուստի աւելորդ եմ հա-
մարում թուել թէ նա ի՞նչ օգուտներ կարող է
բերել մեր ազգին: Բայց պիտի թուեմ այն օ-
գուտները որ մենք պիտի ստանանք անհատա-
պէս:

Բեմը կրթում է, բեմը մեր աւելորդ ձեւերը
կտրատելով ինչպէս ծառի անպէտք ճիւղեր,
սարքում կոկում է անհատներին, բեմը տա-
չում սրում է եւ ազնուացնում մեր զգացմունք-
ները, բեմը ուսուցանում է հեղինակների հո-
գոյն թափանցելու ձեւը, բեմը սովորեցնում է
ուսանել եւ ուսուցանել:

Գեղարուեստի աշխարհը այնքան մեծ է, այնքան անսահման որ ոչ ոք կարող է յաւակնիլ թէ այդ աշխարհի բոլոր անկիւններուն արդէն ծանօթ է: Մենք կարող ենք ուսումնասիրած լինել քսան հազար դէմքեր կամ թէ հարիւր հազար, բայց դա ի՞նչ ողորմելի թիւ է ընդհանուր մարդկութեան թիւի համեմատութեամբ:

Յանկանում եմ ասել թէ բեմը ոչ չափ ունի ոչ սահման. ահա մի գործ որ ընդունակ է ընդ միշտ նորանոր սէր դարձեցնել ձեր մէջ: Բայց գեղարուեստի աշխարհը փոթորկալից է. դուք սարսափելի կոիւնների, դժուարութիւնների եւ պէս պէս փորձութիւնների պիտի հանդիպէք. բայց այն սէրը որով պիտի վարակուի ձեր էութիւնը, ձեր մէջ ներշնչելով կամքի ոյժ, յաղթանակել պիտի տայ ձեզ:

Այո՛, մեր դէմ կոիւր կը վերջանայ միմիայն մեր գերեզմանի եզերքում. այնտեղ է որ բթանում են հատու գործիքները եւ բոլորը մի սիրտ մի մարմին եղած՝ գրկելով յաճնում են հողին, թուելով քո յաղթանակները եւ գովելով քո բարեմասնութիւնները:

Իմ այս յայտնութիւնները թող ձեզ չյուսահատեցնեն: Կեցցե՛ն նրանք որոնք զգում են իրենց մէջ կոուելու ոյժ եւ սէր դէպի գեղարուեստը: Ուրեմն առաջ դէպի գործ: Ինձ համար առաջին եւ գլխաւոր կէտը, կարգալէ առաջ մենք պէտք է սովորենք կարդալ այնպէս որպէս թէ խօսում ենք. պէտք է աշխատինք որ մեր ձայնը ներկայացնէ, այսինքն արտայայտէ՝ ուժեղ կամ մեղմ շեշտերով, ըստ նիւթի. երկրորդ, մենք պիտի ստիպենք մեր դէմքը արտայայտել այն բառը ինչ որ մենք կարդում ենք. երրորդ, մենք պիտի սրենք մեր լսելիքը մեր ընկերոջ կարգալու ժամանակ, մեր վրայ թողած ազդեցութիւնը, այդ բառերից առաջ եկած մեր ներքին յուզումը կամ ուրախութիւնը (պէտք է ջանանք) արտայայտել մեր դէմքերի վրայ:

Եթէ մենք կարողացանք այդ երեք գլխաւոր կէտէրուն տիրապետել, այլ եւս ոչ մի դժուարութեան չենք հանդիպելու, նրանից յետոյ հեշտութեամբ կարող ենք հպատակեցնել մեր ձեւերը. վերջապէս մեր ձեռքերը, մեր գլուխը, աչքերը կ'անեն այն ինչ որ մենք ենք ցանկանում. ուրեմն մենք կը սկսենք կարդալ: